


Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYOS

(EGYPTE) LE CAIRE



ՊՐԵՍՏԱՆԿ

ՆԳԻՊՑՈՍ

Տարեկան դրո-սոյ 30

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Տարեկան գրանկ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍԻ ԳԵՐՈՒ ՓՈՒՍՏԵՆ ԳԵՐՈՒՄԷ ԳԻՐԻ ՎԵՐԵՍՏԱՆԻ ԳԻՐԻ ԳՐԱՆԿՆԵՐ

ԱՐՁԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

ՕՐԴԱՆ ԱՐՁԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Թե՛ ԱՐՇԱԼՈՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ Վերաբերեալ ներկայիս խնդրոց համար պէտք է յիշեցնել ներքինիս հասցեայ թերթիս Մասնախարարին, որ է՛

ՎԵՐԵՍՏԱՆԻ ԳՐԱՆԿՆԵՐ

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
որ համաձայնութեամբ :

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները սեզոնային պատասխանա-  
տու են իրենց գրածներուն

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԶ

ՀԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՆ

Կիլիկիոյ վայրագ շարժին ման-  
րամասնութիւններն ու եւրոպական  
պաշտօնական տեղեկագիրները արե-  
ւու նման պայծառօրէն ի յայտ բե-  
րին թէ՛ ս'րքան Սուլթանի Համիտի  
նոյնքան ալ Սահմանադրական կա-  
ռավարութիւնը մատ ունին այս ե-  
ղեռնագաւախ մէջ, ու անդամ մըն  
ալ մատնանչեցին թուրքի հնաշա-  
քիցի քաղաքականութիւնը որ ցնի-  
քօրէն շարունակելի է գեւ...  
Նախարարաց Խորհուրդին և Երես-  
փոխանական Ժողովի քար անտար-  
բերութիւնը, հիմապրնա պատարզով  
սովորական աւօրեայ բանաձեւը,  
շարժի բուն հեղինակներուն անպա-  
տիժ մնալը և նոյն մարտիրոսացած  
ժողովուրդին ափ մը ինքնապաշտ-  
պան քաջարի երիտասարդներուն  
բանտարկումը, որոնք կ'ամբաս-  
տանուին անշուշտ թէ ինչու իրենք  
ալ մեռած չեն, բացորոշապէս կը  
խօսին թէ « Չարագացումի օւռնացող  
սաղմերու տէր հայը՝ երբէք չպիտի  
կարենայ ապրիլ ծոյլ մոլեռանդ և  
անասունէն աւելի անբան թուրքին  
հետ, ցեղ մը՝ որ մակարոյժի նման  
ուրիշներու մարմինէն մանկու  
վատշուեր ընդունակութիւնը մօզն  
ստիկնէն ժառանգած է... »

« Թուրքիոյ համար Սահմանա-  
դրութիւնը ազգային անձնապայանու-  
թիւն է, և եթէ թուրք կառավար-  
ութիւնը յաջողի իրապէս Սահմա-  
նադրականացնել իր երկիրը, ինչ որ  
անհնարին է, այն ստեղծ պէտք է  
պատուել ամբողջ ուսումնասիրուած  
այն յատկութիւնները՝ որոնցմով մի-  
այն կարելի է Սահմանադրութիւն  
հաստատել ո՛ր և է երկրի մը մէջ,  
որովհետեւ թուրք ցեղին կրօնական,  
բարոյական, դարագաման և այլ յե-  
տադիմական արմատացած առաքի  
նութիւնները (՝) քոլորովին կը ժխտեն  
այդ պահանջուած յատկութեանց »  
կը գրէ « Եթէ իրենց կազմէ Մարտ  
31ի Պօլսոյ զինուորական ընթացու-  
թեան ատեն, եւ արդէն իրարու  
յաջորդող յուլուսնալից դէպքերն  
ու Ատանայի զուլումը հաստատե-  
ցին թէ թուրք մուսուլման ցեղը  
Սահմանադրութեան անընդունակ է  
բացարձակապէս : Առ այժմ՝ այսպէս  
կոչուած « Սահմանադրութիւն » բա-  
ռը՝ թուրք կառավարութեան իբր

վարագոյր կը ծառայէ, որուն ետեւ  
խաղալու պատրաստուող հերոս դե-  
րակասարներն են նոյն այդ բունա-  
կալ Օսմանցի պաշտօնեաները. և  
մինչ մենք վարագոյրի բացուե-  
լուն կսպասենք խոստացուած բարե-  
կարգութեան յաջողի արդիւնքն  
վայելելու, ահա՛ վարագոյրը կը  
բացուի և հայերս տխուր պահան-  
տեւը կ'ըլլանք նոր արիւնքուշտ և  
սուսմամբիք զաւելցնուելու և հայ  
գերեզմաններու հողակոյտներուն :  
Կը բողբենք կառավարութեան, կը  
խոստանայ հայ յանցաւոր (՝) ներք  
պատեւ... կը բողբենք մարդ-  
կութեան, անգուժ եւրոպայի, ան  
ալ ցոյց կուտայ Սահմանադրութեան  
թատերական վարագոյրը և կը վըս-  
տահեցնէ թէ՛ թուրք կառավարու-  
թիւնը մեղսակից չէ. ան խոստացած  
է իր կարելի միջոցներով բարեկար-  
գել թուրքիան. հայերուս երկը-  
րային դժոխքը... մինչդեռ վարա-  
գոյրին ետեւ նորանոր սարսուղե-  
ցիկ զաւելցնելը կը պատրաստուին  
հետզհետէ ներկայացնելու... վը-  
կայ գաւառական արիւնտու թղթակ-  
ցութիւնները :

Սակայն ինչ պիտի ըլլայ Հա-  
յուն ապագան, այս է ներկայիս ա-  
մենակենսակն և կենտոս հարցը :  
Միշտ պիտի մորթուինք ոչխարի  
նման մինչև որ հայութեան հոտն  
անդամ չմնայ թուրքիոյ մէջ. կըր-  
նանք բսել այո՛ր և ո՛չ՛ այո՛ր, որով-  
հետեւ մեր դիմաց ունինք հազարա-  
պատիկ զօրաւոր ցեղ մը՝ որ զինուոր  
կառավարութիւն իրեն կողմնակից  
ունի և զէնք պահանջուած առա-  
տութեամբ. ո՛չ, որովհետեւ Ատա-  
նան այլ ևս պէտք է փորձաբարն  
ըլլայ հայուն և ան իր հաջնէն աւելի  
գերադաս համարէ պողպատեայ  
պաշտպան մը : Մենք ո՛չ եւրոպա-  
յէն, ոչ Սահմանադրական թուրք  
կառավարութեան և ոչ ալ ուրիշէն  
օգնութիւն սպասենք, մենք օգ-  
նութիւնը մեր մէջ փնտռելու ենք :  
Կը մեծնայ այն ազգը՝ որ իր զօրու-  
թեան կը զտահի : Եթէ միակ մի-  
ջոց ո՛ր ունինք գէթ ժամանակ մըն  
ալ մեր գոյութիւնը պահպանելու,  
մինչև որ թուրքիոյ կառավարու-  
թիւնը անխուսափելիօրէն բաժան  
բաժան ըլլայ, դա ինքնապաշտպա-  
նութիւնն է, միակ և փրկարար  
ճամբան :

ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱԳԷՄԷՆ

ՀԱՆԳԻՍԱՒՈՐ

ՉԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՑ Ա. ՍԱՐԿԱՒԱՐԿԱՑ

Երևուստէմ 24 Մայիս 1909

Պօլսոյ Ազգայի վարչութիւնը՝ որ  
ի սփիւռս աշխարհի ցրուած տարաբաղ  
Հայութեան ճակատագիրը այսօր իր ա-  
փին մէջ ունի՝ փոխանակ խղճմտօրէն  
գործելու, խաղեր կը խաղայ և աշ-  
խարհ համայն իր վրայ խնդալու, իր  
գործերը դիտելու և վրան ողբալու ա-  
ռիթմեր կ'ըստեղծէ : « Բանի » դժուար  
բան է, երբ ինքզինքը կառավարել  
չ'գիտցողը՝ կառավարողի դերը ստանձ-  
նել կը յանդգնի...  
Այստեղ արարատ՝ ուր որ հայ մը  
կայ, Կիլիկիոյ աղէտեղանքովը հետա-  
քրտած ատեն, խօսք հառաչանքներ  
կ'արձակէ. շատերը այդ հառաչանքներն  
կ'ըզձածուին, իսկ շատեր՝ ալ չի ըզ-  
գածուելէ զատ, այլոց զգացմանց հան-  
դէպ Դանիէլեան ուրիշ ու քանդիչ չար  
վիշապին նմանած են զիրենք պաշտել  
տալով...  
Աստուած իմ, ինչ զարմանալի  
դարու մը մէջ կ'ապրինք. դար՝ աշք-  
կապուկ խաղալու դար՝ ժամանակ՝  
օգգապազուրիս խաղալու և միամիտ-  
ները խաբելու :

Ո՛վ չ'զարմանար անոնց վրայ, եւ  
ո՛վ վիշտ չ'զգար անոնց ամայի եւ ա-  
մուլ մտածումներուն վրայ, ու խորա-  
պէս չի յաւեր՝ որ ազգին մեծ ու  
անբուժելի վէճքին վրայ վէճք մը եւս  
կը բանան որ ասողը նախաւոր յոյսը տա-  
ծող մարմինը իսպառ մեռնի եւ անշըն-  
չանայ :

Շատ անխոհեմ բան է, բեռ մ'ու-  
նեցող ուսին վրայ բեռ մը եւս գնել  
հակառակութեան յաղուրդ աալու հա-  
մար. ո՛չ ապաքէն բեռ մը արդէն ու-  
սին վրայ ունեցողը, ուրիշ ծանրու-  
թեան մը յաւելումին չ'կրնալով առ-  
կայ, գետին կը գլորի. ա՛հ, ամէն ինչ  
գլորուողին կ'ըլլայ, իսկ գլորելու պատ-  
ճառ տուողը կողորդալի կը խնդայ :

Ազգային վարչութեան միամտու-  
թեան վրայ զարմանալով կը զարմա-  
նամ, Տակաւրն մէկ վիճէն չ'եղած չը  
կանգնած, կը փափայր աւելի խոր վիճ-  
մը գլորուիլ յաւիտեանս չ'կանգնելու  
յուսով... Լա՛նք թէ խնդանք :

Պօլսոյ վարչութիւնը փոխանակ  
զՎեհապետեան Տէր Յարութիւն Ս. Պատ-  
րիարքը իր ծերութեան համար Պատ-  
րիարքական պաշտօնէն դադարեցնելու,  
որ բնա՛ւ ազգին ո՛ր եւ է վնաս մը չուրի,  
որովհետեւ քիւր օգուտներ ու մեծամեծ  
ծառայութիւններ ազգին մատուցանող  
ազնի սիրտ եւ հոգի ունեցողը յետոյ  
գէշ չէ՛ կարող ըլլալ. մենք պէտք էր  
յաւէտ եօթըզլեան վիշապ մեալ ցան-  
կացողները ճանաչէինք եւ ճշմարիտ  
ազգասէրներու առջեւ ալ յարգանք եւ

երախտադիտութիւն տածէ ինք. Վեհա-  
պետեան Սրբազան մին է այդ ազգասէր-  
ներն, և իր ըրած եւ ընելիք ազգօ-  
ղուտ գործերը սուտ ազգասէրներու նը-  
ման ի ձայն փողոյ եւ թմրկի քարոզել  
չի՛ տար. զի սեւ սիրտ ու սև հոգի չէ  
մեզի ծանօթ ուրիշներու նման :

Վեհապետեան Սրբազան այս ան-  
գամ իր գործերու կորովը ազգին ցոյց  
աալու, և ազգին միամիտները հաց-  
կատակ խաբեբաներէ խաբուած ըլլալը  
ապացուցանելու, եւ միեւնոյն ժամանակ  
իր Պատրիարքութեան իրաւունքները  
բունարարի չ'տալու համար, ինք ան-  
ձամբ Մայիս 23ի Շաբաթի երեկոյին ե-  
կեղեցի իջաւ և Ս. Յակոբեանց Մայր  
Տաճարին մէջ վեց Աւագ - Սարկաւա-  
գաց վարդապետական կոչուած ըրաւ,  
և յաջորդ կիրակի առաւօտ Մայիս 24  
ամենայն փառաւորութեամբ հոծ բազ-  
մութեան մը ներկայութեան զանոնք  
վարդապետ ձեռնադրեց շա՛տ ուրախ,  
շա՛տ հանգիստ եւ ասողը վիճակի մը մէջ  
եւ զուարթ սպաւօրութեան ներքեւ, և  
նաեւ խօսեցաւ մօտ 10 վայրկեան հրա-  
հանգիչ քարոզ մը՝ յորդորելով վեց նոր  
ընծայները որ ց'կէտ իրենց կենաց  
վերջին րոպէն, Առաքելական Ս. Ա-  
թոռոյ հաւատարիմ մնան եւ Ս. Աթո-  
ռոյ շահերու եւ իրաւանց համար ամէն  
զոհողութիւն չ'խնայեն եւ ըլլան անձնը-  
ուէր զաւակներ Ս. Աթոռոյ եւ տէր ու  
պաշտպան Ս. տեղեաց մէջ եղած հայ  
ազգի իրաւանց, և ահա՛ Ն. Ամենա-  
պատուութեան խօսած քարոզին մէկ  
մասը նոյնութեամբ :

« Սիրելի զաւակներս,  
« Շատ տարբեր է որ սարկաւա-  
գութեան պաշտօնը կը կատարէք. անց-  
եալներս եւ փափաքեցայ որ զՁեզ Գրի-  
գորիս Եպիսկոպոսը ձեռնադրէ՛ բայց չի  
ձեռնադրեց. անոր զազտնի եւ թաքուն  
նպատակն էր, կա՛մ Սիմօնակտու-  
թիւն եւ կա՛մ շարերու թելադրանք,  
որ իր ծեր վիճակովը շարերու շար նը-  
պատակը քաջալերել ուզեց : Աստուած  
ինձի օւժ տուաւ եւ ես զՁեզ կը ձեռ-  
նադրեմ :

« Եթէ վարդապետ չի ձեռնադրեմ  
ո՛վ Ս. տեղիքը պիտի պաշտպանէ :  
Շատերը այս ձեռնադրութեան հակա-  
ռակեցան որ հոս մարդ չի գտնուի եւ  
մեր ազգին պարծանք եղած Ս. տեղ-  
եաց իրաւունքները վրայ տանք ու մեր  
նախնեաց անէմքները մեր վրտն թա-  
փին, որոնք աննման ջանքեր եւ ճի-  
գեր ջիւնայիլէ զատ՝ արիւն ալ թափաօ  
են : Ամենէն մեծ ապերախտը այն է որ,  
իր շահուն եւ փառքին համար կուզէ  
այս զարաւոր հաստատութեան շատ  
գէշութիւններ ընել :

« Ազգը, այո՛, խաբուած է թէ՛  
եւ ծերացած եմ եւ չեմ կարող այլ եւս  
գործել. ձերութիւնը ամենուրեւ համար  
է եւ ամօթ ալ չէ. բայց այսպէ՛ս պի-  
տի փոխարինել ինձի ազգը ներկայա-  
ցընող Պօլսոյ կեդր. վարչութիւնը :

« Այո՛, ես ծեր եմ, բայց ազգը  
թող տեսնայ որ ծերութեանս պահուն



նիկեան էֆ. յայտնէ հրապարակաւ այն անունները որոնք « ԵԿԵՂԵՑՄ. ԿԱՆ ԻՇԵՒԱՆՈՒԹԻՒՆ » անունով բացատրուած են աղէտեայնորէն զբրկուած հաշուեցոյցին մէջ : Պէտք է որ « Եկեղեցական իշխանութիւն » ըստածը՝ գոնէ վիսյոյն մարդ մը ոչ-տուն իրեն սրոյ անունովը ցոյց տրբուի, որպէսզի այդ հաշուով հետաքրքրուողները գրեն և հասկնան թէ՛ ստուգիւ զրկուած գումարները ըստացած են : Կը յուսանք թէ Անգլո-բանիկեան էֆ. այս դիմումին գոհացում կուտայ :

318, որ կրնէ Երկրորդ . որը 2809, 50

ԵՄԱՍԹ .- Սոյն գումարը Գահրէի Հայ Յեղ. Դաշ. Ենթակոմիտէն չէքով մը ստացած ըլլալը մասնաւոր նամակաւ մը յայտնած է, ծանուցանելով միանգամայն թէ սոյն ցուցակէն օրինակ մ'ալ « Լուսաբեր » զրկուած է ի հրատարակութիւն :

Սեռ ՈՐՁԻՆ

Դ. Ա. Բ. Ա. Պ. Ե. Տ. Ե. Բ. Ը.

« Փառսթեան օճախ Լուսաբեր » ի ալլ եւս յայտնի դարձանապետները, Վահան Մալեղեան, Տօքթ. Քէչէճեան և Ազգականագիտ. Յակոբ Օճանեան և ուրիշ մէկ քանիներ ալ, իրենց գեանագալար, ստրկարոյր, և եղանակին ու մատնչային արարքները ծածկելու և « բարեգործութիւն » պոռնկացնելու և շնացնելու քիչ մը եւս ժամանակ վատակելու համար, Կիլիկիոյ հազարաւոր զօներուն արեանը մէջ ց'նազող Հաճարային լոգանք մը ընելէ յետոյ, յանդգնութիւնը և աւելի լրբութիւնը ունեցած են « սեւ որջի » օրկան Լուսաբերի Յունիս 10 Հինգշաբթի օրուան թուոյն մէջ « Յայտարարութիւն անուամարկութեանց առթիւ » խաբէական ու շնական գրութիւնը հրատարակելով և զինքն զանոնք ապուշներու տեղ գնելով . . . :

Այդ արգահատելի մակարոյժ սողնազգիները, չեն գտեր թէ՛ ամէն գործի և օրարգայի մէջ՝ յայտ հանրութեան արդէն ինքնզինքնին անուամարկած ըլլալով՝ « անուամարկուած » վրայ խօսելու անգամ իրաւունքն զրկուած են իսպառ : Մանաւանդ որ՝ չեն գտեր ալ մտածել այդ ողորմելիները թէ՛ « տնուն » ունին որ ո՛ր և է մէկը բարեհաճ « անուամարկուած » փորձել իրենց մասին . . . :

Վերոյիշեալ երբեակ՝ եւ իրենցմէ խաբուելով իր թէ համակիր լրբուողութիւնները, ինքնագործութեան յիմարութեանց տարուած՝ վերջին անգամ մ'ալ հայ համայնքին ցուցադրելու համար իրենց ցաւագործութիւնները, իրենց միայն յատուկ տիմարարանութիւններով հրապարակելով և իրենց զէմ լարուած միաքեքը ուրիշ կէտի մը վրայ մոլորեցնել կը փորձեն, շանքածի թերթ եւն որակելով Եզրիպտոսի Արշալոյսը՝ որ՝ ըստ իրենց՝ բան գործ ըրած է եղեր նորվել, հալածել, նախատել անոնք որ՝ արժանիքներ ունին եղեր . . . Իսկ այսպէս յայտարարելու համարձակող լկտի գետնագալարները կը մոռնան որ սողալու, զրպարտելու, ստելու, ոճրագործելու եւն, եւն . վատութիւններն ալ՝ իրենց և իրենց նմաններէն « Արժանիք » նկատուած են . . . և ըստ այնմ կը վարուին իրենք՝ մոռնալով որ մեր սասանձնած պարտականութիւններէն մէկն ալ՝ երկաթէ կետերով իրենց երեսին գրեմակը պատուել և հանրութեան դատաստանին ենթարկելն է : Այս պարտքն է հաճ որ խցի մտք պիտի ուզենք կատարել, որչափ ալ դիմարին համարուի այն . . . :

Այդ աղտոտ « ըլլիք » ը, ինչպէս բուռեցաւ, պատմելու ևս իր անարդ գոյութիւնը քաշկարելու համար, իր վերոյիշեալ յայտարարութիւնովը գիտաւորութիւն ունի մեզի ծանօթ յարգելի անձնաւորութեանց փեղիթ տակ մտնելու հոն բազմատանիներու (զրգեակ) պէս բոյն գնելու ջանալ, ծածկելու համար ոճրիներ, ոճրիներ . . . Եւ պիտի գտնուին հայի որ բարեմտութիւնը պիտի ունենան, աւաղ, ազգարոյր խաբէութիւն Լուսաբերի մը այդ շնական լեզուագործութիւններուն թաքուն նրպասակները իր ճշմարտութիւններ հալած իղի պէս կուլ ալ, և նոյն իսկ չ'կարենալ զանազանել թէ՛ ո՛վ է ազգին ճշմարտ բարեկամը, և որոնք են խաբեաները . . . :

Լուսաբերի այդ ազգարոյր սեւ ծաղիկները, իրենց ծանօթ հետեւորդնե-

րով, զերգանց և հորազոյն պատճառներ ունենալով և մանաւանդ քաջ գիտնալով որ իրենց բարոյականը, այս բառը իր ամենալայն իմաստով ամենաթեթեւ խաղաղութեան մը անջե իսկ փշուելու և անհանալու տրխուր վիճակին մէջ է, ուստի շնակաւորէն համայնքին մէջ անհամեմատօրէն բարձր զիբը գրուած մարդոց անուները շահագործելու կը ճգնին . զո՛ւր ջան, անօրհէտ վատակ . . . :

Մենք մեր իրաւանց սահմաններուն պիտակցութիւնը, « Լուսաբեր » ի քայքայելու պատրաստ օճախին շիջելովառ կայծերը խառնչուող՝ քեզակրեկի ախտէն վարակուած չքաղածներէն սորվելու պէտք չունինք :

Մենք մեր իրաւանց սահմանին մէջ քննադատած ենք Առաջնորդ և Առաջնորդարան, ուր եթէ դեռ շարունակեն սեղի տալ, պիտի քննադատենք և նետղեմէ աւելի խիստ թերեւս . . . :

Փողովականներուն մէջ ազնիւ մարդիկ ալ կը գտնուին, որոնք յականէ յանուանէ պիտի հրապարակենք յառաջիկային իրենց ուղղամտութեան և գործունէութեան վրայ կրթնելով . առանց ապացոյցի և պատճառի, ո՛չ մէկը կը գովենք և ո՛չ ալ կը պարսաւենք :

Առաջնորդարանի քարտուղարները մէկ ջուրով լուացած չենք Դուրգէն և Ղեւնդ, Դիւանապէթ Նազարէթէն տրուած հրամանը գործադրած են . . . ի զէպ ժամու :

Կամբարտանները Դիւանապէթը որ « փայտէ աթոռներու տեղ ունի աթոռներ » կուտայ . . . Եղեր, փոխարէն հաստատուն պողպատէ շինուած աթոռներ ընդունելու համար . . . :

Նազարէթ Աղաղարմեանը կամբարտաններ, այո՛ « Լուսաբեր » ի սեւ որջին միջոցաւ իրեն տխուր անցեալները պարտիկ ջանալուն համար, որուն վրայ պիտի խօսինք նետղեմէ :

Հ. Բ. Ը. Միւրթիւնը ամբաստանող բառ մը թող ցոյց տան վերագրելու Յայտարարութիւնը ընկու յանդգնող ոճրագործ հեղինակներ . . . Միւրթիւնը կտրելի է քննադատել, միմիայն Մողեղան-Օճանեան տխուր ղոյզին և ընկերաց արդի մասնակցութեանը համար . . . :

( Հ. Ս. Ռ. Կ. ) Կուսակցութիւնը, հաստատած ենք՝ որ կազմուած էր քանի մը հին և նախնական կողմէ, որպէսզի իրենց շուրջը զիրենք պաշտպանողներ հաւաքեն - գաղափարածախ միամիտներ, - եթէ կան Եզրիպտոսի մէջ . բայց ոչ ոչպի ալ ստոյգ է որ հիմայ հատ մը իսկ չունին իրենց շուրջը, և դատարկութիւնը կը տիրէ . . . :

« Լուսաբեր - Արեւ » օ՛հ . ստոր խօսքը չըլլար, փառսթեան օճախ է այն, Մեղք Բաշային տայրէէն և ուրիշներէն ալ այդ աղբա-խաբէութիւնի համար ստեղծ մը ի վեր վճարուած ահագին գումարներուն . . . :

Մուշեղ Սրբազանը. ա՛խ . ըսինք՝ ու չ'կրցաւ հասկնալ . որքան անխիղ է եղեր . հիմայ կրնայ իրեն խաբուած ըլլալը խոստովանել . . . Թիֆլիզէն « ՀՈՎԻՒ » Եւրաթաթիթերը մեր ըսածները լաւ հասկցած և բաւ առ բաւ այնչափ նուազէն արտագրած էր ինքը մեր քովը գտնուելով ճանդերձ՝ չուզեց հասկնալ . մեղքը չէ՛ր իրեն պէս նորանաւ Բրտոսարդի մը՝ որ սպաղայ ունի . . . :

Մալեղեան - Օճանեան ալ կան եղեր մեր յարձակումին ստարկայ . պարտնենք, դուք աւելի լաւ կ'ընէիք մտրի մեղ մնալ իրեւ մտրի ուղի. դուք ալ կ'ըլլնաք հրապարակ ելլել եղեր . . . դուք որ մարդ ըլլալէ աւելի սարբեր բաներ էք . . . և « Արշալոյս » մը պէտք է, որ ձեր երկուորեակը իրեն արժանի տեղը զըրկէ . . . :

Իզմիլեան, խանգալաւ փողովորդ խաբիւրելու համար « Լուսաբեր » ըստածին կողմէ գործածուած անուն մ'է որուն համար ըսելիք մը չունինք, բացի այն որ կրնենք հրապարակաւ իգիտութիւն և ի պաշտպանութիւն իրեն, բայց դուք ո՛ւր Օճանեան-Մալեղ-

եան աղտոտութիւններ՝ որ զնացեր անոր միւսպիսին տակ ինքզինքնից մաքրել կուզէք . . . կարելի՛ է . . . կը հաւատա՛ք : Կեցիք դուք. փեսայու աներձագ, կեցի՛ք, բուն իսկ իզմիլեան Վիսափառն է որ Ձեզի պիտի խօսի և անհաղատբաւ . . . : Եթէ մասնակին Ձայն ևս խաբիւր լաջողոյնը գտնուեցան . . . ձեր « ըլլիք » էն :

Այսօր այսպիսի բնագնաւոր ատմամբ, յառաջիկային մի առ մի մասնաւորներու վրայ պիտի խօսինք : Եւ անարժանիները « արժանաւորներէն » պիտի գտնուի, որպէսզի մեր ազգը տակաւ տակաւ բարեկարգուելու շաղկին մէջ մտնէ : Դուք խաբեցի՛ք՝ մենք ճշմարտութեան խարտեր կը դնենք ձեր տրատուար ակտին վրայ, ապիբա՛ս ոճրագործներ . . . :

ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ

Վ Բ Ի Պ Ա Կ

Թերթիս 545-73 թուոյն « Խրիմեանի Կաթողիկոսութիւնը և Իզմիլեանի Կաթողիկոսացուած » յօդուածին մէջ, երկրորդ էջ, Բ. սիւնակ. վերէն հաշուելով տող 30րդ. պէտք է կարդալ, « և այս ամենուն նետ ունին նաեւ ՉՂԱՅԻՆ՝ դրութիւնը » :

Յետոյ՝ երկրորդ էջ Դրդ. սիւնակ Անանիսէն արտագրուած ամբողջ հատուածը պէտք է կարդալ .

« Բայց այսօր արեւմտեան օր յի . այսօր եւ կը խորհիլ ո՛չ քի իրիւնակի անձին, ալ իրեւ արեւի մեծ բակի մը, Հայ Կաթողիկոսական արտոյն, և ուղեցի բարեկէն որ ճշմարտութիւնը կը կրկնուի, և ինչ որ հարկաւոր կը հանարիլ որ ըսուի այդ արտոյն շանուն համար » :

ԿԻՒԿԻՈՅ ԱՆՑՔԵՐԷՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պերթիներ Թակեպար կ'ըսէ թէ՛ Ատանայի մէջ տրուած դատաւճիռներուն նախելով, Ատանայի խառնութեան մէջ հաւատարմացնի մասնակցութիւն ունեցած են Հայերը և Թուրքերը .

— Արեւելյ տեղական թերթերէն անուելով ծանուցած էր թէ՛ տան և հինգ թուրքերու և հայերու վրայ մահուան պատիժ գործադրուած է Ատանայի մէջ՝ սակայն յետոյ Սապանէն անուելով կը հերքէր այդ լուրը ու կ'աւելցնէր թէ՛ Ատանայի պատերազմական ատեանին կողմէ պատրաստուած մահաւճիռներու տեղեկագիրը հոս զրկուած են, կայս. Իրատեղով վաւերացուելու համար .

— Պոլսոյ թուրք թերթերէն Թալիսիոյ Էփեսար կը գրէ Ատանայի գէպերուն մասին . « Ատանայէն ստացած մեր տեղեկութեանց նախելով՝ կը գրէ Թալիսիոյ տեղաւոր Վրայ կատարուած անաչառքնութիւններով երեան եկած է թէ՛ Ատանայի գէպը լոկ յետադիմական շարժում մը չէ կարճաւոր պէս . այլ ուրիշ նպատակներով գործուած է այն : Այս մասին ձեռք ձգած մեր ապացոյցներուն վրայ կատարելապէս վստահ, յիշեալ լուրը արդարադատութեանը կը յանձնենք մեր կարգ մը շարժանցաստեր պաշտօնակիցներուն, որոնք ստալոյզ զըրոյցներէ ակոտը կ'զգան : Հայերնիքի զաւակ կոչուելու իրաւունք ձեռք բերելու համար, լուր տալէն աւելի պէտք է ճշմարտութեան խորը թափանցել և այդ մասին հարկ եղած հայրենասիրութիւնը ունենալ » :

— Կայսերական իրատե մը, կը գրեն Պոլսոյ թերթերը, վաւերացուցած է Ատանայի Պատեւազմական ատեանին կողմէ տրուած մահաւճիռը 9 Իւլաններու և 6 ոչ - իսլամներու մասին .

Բ. Դուրք Պատերազմական նախարարութեան զեկոյց, անմիջական

Ի ՆՊԱՍՏ  
ԶԷԹՈՒՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՍՈՎԵՂՈՅ  
Ա.Տ/Ա-Ապարաի (Եթովպիա) Հայ Սեղ.  
Դաշնակցութեան ձեռամբ  
ՀԱՆՊԱՆԱԿՈՒՄԸ

Եթովպական թալէր  
Տ. Տ. Կրիգոր Հովան 5, Մարգար Միրզան 50, Յակոբ Բախտասարեան 30, Սէմէրճեան Եղարար 30, Գրիգորիս Պողոսեան 20, Յովհաննէս Թէրզեան 15, Սեդրաք Միրզայեան 15, Վահան Փողոսեան 13, Արարհամ Թէրզեան 12, Տիկ. Փէլիսի Մաթիս 2, Կէսրդ Միլիթեան 10, Սամուէլ Պոյաճեան 5, Կէսրդ Արբերեան 8, Ստեփան Եսգրճեան 5, Լևոն Եսգրճեան 5, Ալիբեան Դարբինեան 5, Հ. Մ. Եսգրճեան 2, Մինաս Միրճեանեան 8, Յակոբ Իսրայէլեան 5, Կարապետ Ճիլէրճեան 10, Տիգրան Պատիկեան 5, Նշան Մեսրոբեան 1, Թորոս Պարսիկեան 10, Հ. Աղնաւուրեան 2, Մամաս Թէրզեան 5, Ոճն 2, Յակոբ Հալէպեան 5, Ն. Ս. Մ. Թէրզեան 5, Վարդուհի Ս. Թէրզեան 10, Ռուբէն Պոյաճեան 1, Յ. Պոտոյեան 2, Մ. Մ. Աղնաւուրեան 4, Յ. Եսգրճեան 1, Մ. Չօլաքեան 2, Ոճն 1, Վ. Միրանչեան 2, Յարութիւն Փէհրիզեան 5, Դուրաթալէս

# ՄԵԾ ՎԱՃԱՌՆՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՂ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



## ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելքան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի տաճան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարտներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար հարկ չ'կայ հոս ու հոն ժամապահառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է .

Մեր վաճառատունը վերջապէս, զինքնու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճորտութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել սրոյած սպրանքներուն թարմութեամբը անմրցելի է, սրուն անժրտելի ապացոյցներէն մին ալ պարզացած Եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

Կերպով գործադրել մահապատիժը և զգուշական միջոցներ ձեռք առնել պատժի գործադրութեան միջոցին ո՛ր և է անտեղութեան առաջըր առնելու համար .

### ԿԱՍԱԿԱՆ

Ահաւասիկ անունները այն դատապարտուածներուն, որոնք Մայիս 28 ին կախաղան բարձրացած են Ատանայի մէջ .

Իպրահիմ օղլու Էլճի հաճի Մահմուտ, Պէշիբ օղլու Պէշիբ, Տուրուտ օղլու Մուսթաֆա, Մէհմէտ Բեաճիլ օղլու Մուսթաֆա, Մուլա Ահմէտ օղլու Մէհմէտ, Ճարճու Հիւսէյին օղլու Հասան, Հաճի Ահմէտ օղլու Պէշիբ, Քարաճա օղլու Իսայիլ, սրդին Շիւքրի, Ապտիլ Բէզաք օղլու Մէհմէտ, մասվաճառ կարապետ օղլու Խաչօ, Միսաք Սիրքէճի օղլու, Խաչէր օղլու Արթին, Խաչէր օղլու Օհաննէս, Խաչէր օղլու կարապետ, կիրա կոս օղլու Գէորգ .

### ՉՕՔ-ՄԱՐՁՈՒԱՆ

Տէօրք Եօղի բնակիչները պաշարուած էին զինուորներէն, և կ'առաջարկուէր զինաթափ ըլլալ .

Պատրիարքական Տեղապահին զիմուսին վրայ, Մահմուտ Շէվքէթ բաշա հեռագրած է Չօք-Մարզուանի զինուորական հրամանատարին, որ քաղաքին պաշարուած անմիջապէս վերցնէ, այսպէսով Տէօթ-Եօղի կ'ազատի .

### ԿՐԵՏԻԻ ԽՆԻԻՐԸ

Սահմանադրական նոր Սուլթանին բաղձն ալ շատ ոսկեզօծ չերևար . Հազիւ իր գահուն վրայ բարձրացած, ահա՛ կրետական խընդիրը սուր կերպարանք մը կ'ստանայ . Միայնե՛ւ Յունաստանի թէ ո՛չ . Այս մասին կարծիքները շատ կը տարբերին . Փրանսայի դիւանագէտներէն շատագոյններ կան միացման համակիր . Իսկ Աւստրիա և Գերմանիա չեզոք գիւրք մը պիտի բռնեն, կ'ըսեն, Եւրոպական թերթերը . Միայն Թուրքիոյ նպատակաւոր եղած կարգադրութեանց առջև իրենց հաւանութիւնը պիտի յայտնեն . Բայց ասիկայ արտաքին երևոյթն է . ներքին կողմը կարելի է որ շատ մը թաքուն նպատակներ գտնուին խոցի խնդրոյ հետ գործունեացող .

Պէտք է սպասել պիտանալու համար թէ՛ ապագան ի՞նչ անակնկալներու հանդէպ պիտի գնէ զմեզ .

## ՄԱՆՐԻ ԼՈՒՐԵՐ

(Պոլսական)

== Լա քիւրի վերապահութեամբ կը ծանուցանէ թէ՛ Ապտիլ Համիտ դատաստանի պիտի ենթարկուի՝ բազմաթիւ ոճիրներու հաշիւը տալու, և մանաւանդ իր պատասխանատուութիւնը ճշտելու նահանգներու մէջ կատարուած վերջին դէպքերու մասին .

== Թազլիսի վեգայի կը հերքէ թերթերու մէջ հրատարակուած այն լուրը թէ՛ Ատանայի և կարգ մը նահանգներու մէջ ծագած դէպքերը գործուած են կարմիր Սուլթանին կողմէ կուսակալներուն սորուած հեռագիրներու վրայ .

Այս պարագան, կրտէ Թազլիսի վեգայի, քննուեցաւ թղթատարական և հեռագրական վարչութեանց կողմէ և հաստատուեցաւ թէ՛ հեռագրական կայաններէն ատանկ հեռագիր չէ՛ քաշուած .

== Ասկէ առաջ գրուեցաւ թէ՛ Ատանայի Իսլամները ոճրագործները պատժուելու պարագային սուրբ պիտի ելլան եղբր . ներքին Գործոց նախարարութիւնը հրամայած է զինուորական իշխանութեանց օրէնքին տրամադրութիւնները գործադրել առանց սպառնալիքներու կարեւորութիւն ընծայելու .

== Միջանց թերթի խմբագրապետ Մուրապ պէյ ց'կեանս ատանակիր աշխատութեան դատապարտուած է, Ապրիլի ապստամբութեան մէջ մեղաւորութիւն ունեցած ըլլալուն համար .

== Վեհ Սուլթան Մէհմէտ Ե. Կիլիկիոյ արկածաբաններուն համար կազմուած միջազգային յանձնաժողովին ըրած զիմուսին վրայ, բարեհաճած է 500 ոսկի նուիրել .

== Սիլեստարցի Բուհի անուն զինուորը, որ Տէօթ-Եօղի մէջ մէկ զինուորի մահուան և վեց զինուորներու վերադարձին պատճառ եղած էր, Պատրիարքական ասեանին վճուով մահուան դատապարտուած և վճիւր գործադրուած է .

== Էնթէթիոյ և Քէսապի միջև գտնուող Խանը Շիխուն գիւղին իմամը և բնակիչներէն 10 հոգի ձերբակալուած և բանտարկուած են իրր գրգռիչ և հեղինակ չըջակները պատահած դէպքերուն .

== Ենթի կազէթա կրտէ . Ենթի նահանգին մէջ, որուն համար մէկ քանի օր առաջ ըսուեցաւ թէ մասամբ ինքնօրինութիւն

## ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ԵՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՑ Ժ . ՆԱՅՏԻՆԿԵՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԻՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէրներն են ևւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է .

400 և աւելի վիաշական ևւ մեքենաներով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ,

### ԱՄԵՆԷՆ ՄԵՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա.Ռ.Ա.Չ.Ն ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսի մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ  
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկի յստիակն շին

Գին ՉԵՓԱՌՈՐ

Չրի դասեր և նորոգութիւններ, Սինկըր մեքենայից համար, յաճախորդատուններուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հինքու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

մը պիտի ունենայ, նորէն շիտթութեանց նշաններ երևիլ սկսած են . Ենթի կուսակալը ծանուցեր է Բ. Գրան թէ՛ ժողովուրդը իմամ Եահեսարի աշակցութեամբը, նոր ապստամբութիւն մը պատրաստած է . կուսակալը մէկ քանի օր առաջ նորէն զինուոր ուղարկ ըլլալով, պատասխան ստացած էր որ երկու ամիս յետոյ պիտի զրկուին . Ենթի կուսակալը իրաց նոր վիճակին բերմամբ, իր պահանջումը կրկնած և Բ. Գուրը խնդրը հաղորդած է պատերազմական պաշտօնարանին .

== Քաղաքապետութիւնը կարծիքի փոխանակութիւններ պիտի կատարէ Հանրագում Շիտթեանց նախարարութեան հետ, անգործ անձներու գործ հայթայթելու նպատակով հանրագում շինութեանց ձեռնարկելու համար (Եօթէ էջէյիմ...) .

== Ապատական կուսակցութեան Կեղծերը Բարիզ պիտի փոխադրուի, ուրկէ հրատարակութիւններ պիտի ընէ, ինչպէս կրկին արդէն ինքն ղեկ ինքն ատեն . . . .

== Տէօթ-Եօղի Առաջնորդը Մայիս 21 թուականա հետեւալ հեռագիրը զարկած է Պատրիարքարան . Այս գիշեր ժամը 2 ին յան

կարծակի զորանցէն մեր քաղաքին վրայ բաւականաչափ գնդակ արձակուեցաւ . հինգ անգամ ալ թնդանօթ նետուեցաւ որոնց գնդակներէն երկու կիներ մեռան և ուրիշ երկու կիներ ալ վերադարձին կան . Այս առթիւ առաջ եկած յուզումը անկարելի է նկարագրել .

== Թաւաթի Էթէթար ի այս օրուան թիւին մէջ կը կարգանք, կը գրէ Արեւելի .

Ատանայի Առաջնորդ Մուշեղ Նպոկ . Աղէքսանդրիայէն հեռագիր մը ուղղելով Օսմ. Երեսի. ժողովի նախագահին, կը յայտնէ թէ՛ ինք կուզէր Ատանա դառնալ, սակայն թոյլ չէր արուէր իրեն .

Այս մասին տրուած լուսարանութեանց նայելով, անհիմն է թէ՛ Մուշեղ Նպոկի Ատանա վերադարձը արդիւրուած է . Հանրային կարծիքը մուրթեցնելու համար է որ այդ պահանջումը կ'ընէ . Եզիպտոսի մէջ գտնուող անձի՛ մը վերադարձը արդիւրուած ըլլալու մասին եղած պահանջումը շատ զարմանալի է . Եթէ երբէք Մուշեղ Նպոկ կուզէ դառնալ, թո՛ղ բնաւ մտահոգ չըլլայ, ուրիշ բան, եթէ ինք կուզէ ետ կենալ Ատանա դառնալէ .